## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

**ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Արփինե Սարգսյան-ին

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ/ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ)**

Ժորա Աբգարյան-ից

*(դիմողի անուն, ազգանուն)*

Ք. Գյումրի Հ. Սարգսյան 2-րդ նրբանցք, Տուն 17

*(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)*

Տիգրան Աբգարյան մարտական պատրաստության հայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպություն

*(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)*

## ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը, կանոնադրության պատճենը, անձնագրի պատճենը,
2. Հեռ: +37477190321, joraabgaryan@yahoo.com, հաշվառման հասցե՝ Ք. Գյումրի, Հ. Սարգսյան 2-րդ նրբանցք, Տ. 17
3. կազմակերպության գործունեության մասին հակիրճ տեղեկություն
4. Կազմակերպության տեսլականը, և առաջարկությունը
5. Գործունեության հասցե, ք. Գյումրի Վ. Համբարձումյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոց, ք. Գյումրի դարսի խճուղի 20
6. Կազմակերպության համագործակցությունը տեղական և միջազգային, պետական և հասարակական կառույցների հետ

Կազմակերպությունը հիմնադրվել է <<**Մարտական խաչ>> առաջին աստիճանի ասպետ, տանկիստ, գյումրեցի Տիգրան Աբգարյանի հիշատակին:**

## Համառոտ ներկայացում

2016 թվականից մինչ այսօր կամավորների միջոցով կազմակերպում ենք անվադողերի հավաքում՝ ՀՀ ՊՆ զորամասերի ինժեներական ամրությունների համար: Համագործակցել ենք Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի, Հայորդաց տների հետ: 2021 թվականից իրականացնում ենք կրթական ծրագրեր ՀՀ տարբեր մարզերում, բնակիչներին պատրաստում արտակարգ իրավիճակներում պատրաստ լինելուն, իրականացնելով՝ առաջին օգնության պրակտիկ դասընթաց, արշավներ, բանակումներ, հանդիպումներ դպրոցների և համալսարանների հետ, սեմինարներ անվտանգության վերաբերյալ, այլ ՀԿ-ների, հիմնադրամների, կազմակերպությունների հետ համատեղ իրականացնում դասընթացներ երիտասարդների համար:

Նպատակ ունենալով ՀՀ ում ավելի պատրաստված քաղաքացիներ ունենալ, արտակարգ դրությունների ժամանակահատվածում օգտակար լինել Հայրենիքին և աջակից լինել ուժային կառույցներին:

## Կազմակերպության անցած ճանապարհը

2020 թվականին հանդիսացել ենք ՀՀ ում կամավոր գործունեության ամենամեծ նախաձեռնությունը: Տավուշյան ճակատամարտի ժամանակ համագործակցել ենք ԱԻՆ ի հետ, համատեղ տրամադրված մեքենաներով բեռների տեղափոխում իրականացրել (անվադողեր), համագործակցել ենք Լոռու մարզի Գուգարք համայնքի Ոստիկանության հետ 2020-2023, մասնակցել ենք Երևան քաղաքի սուրմալույի պայթյունի աշխատանքներին առաջին իսկ ժամերից մինչ ավարտ, մասնակցել ենք Լոռու մարզի ջրհեղեղի մաքրման աշխատանքներին, իրականացրել ոմբապաստարանների մաքրման աշխատանքներ Գյումրիում:

2020-2025թթ. Գյումրիում կազմակերպել ենք մի քանի բանակում, տասնյակ արշավներ, հանդիպումներ և դասընթացներ, արտակարգ իրավիճակների թեմատիկայով:

2022թ. Սոց հետազոտական աշխատանք՝ դեռահասների հանցագործ վարքի ուսումնասիրումը քրեական սոցիոլոգիայում, Շիրակի մարզի վիճակագրական տվյալների վերլուծության համատեքստում:

2023թ. Սոց հետազոտական աշխատանք՝ աշխատանքային միգրացիան որպես երիտասարդների հասունության և կարգավիճակի փոփոխության նախաձեռնություն, սոցիոլոգիական ուսումնասիրություն:

2024թ. US AID ի հետ իրականացրել ենք առաջին օգնության, արտակարգ իրավիճակներում կողմնորոշման, աշխատանքների, պետական կառույցների հետ համագործակցման դասընթացներ Գյումրու դպրոցներում:

2025թ. AANSI Հայ Ամերիկյան ազգային անվտանգության ինստիտուտի հետ Գորիսում իրականացրել ենք առաջին օգնության դասընթաց, փրկարարական աշխատանքներ և դասընթացներ ԱԻՆ-ի, բշկական կենտրոնի բուժանձնակազմի, շտապ օգնության անձնակազմի, Գորիսի պետական համալսարանի ուսանողների հետ:

Դասընթացները ղեկավարվել են Ամերիկայի Բանակի ավագ սպայակազմի մասնակցությամբ:

**ՀԿ ի հասարակական խորհրդին միանալու տեսլականն և առաջարկությունը:**

Այսօր, գիտակցելով, որ Հայաստանում մշտապես կարող են առաջանալ արտակարգ իրավիճակներ՝ հրդեհներ, ջրհեղեղներ, երկրաշարժեր կամ պատերազմ, առանձնահատուկ կարևորություն է ստանում ակտիվ, պատրաստված և պատասխանատու հասարակության ձևավորումը: Անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի իր դերը, իմանա ինչպես կարող է ծրագրված և անվտանգ ձևով գործել, և լինի պատրաստ աջակցելու իր համայնքին ու պետությանը:

Մեր նպատակն է միանալ Ներքին գործերի նախարարությանը կից հասարակական խորհրդին, որպեսզի մեր փորձով և մեծ կամավորական թիմով կարողանանք արդյունավետ մասնակցություն ունենալ երկրի ներսում առաջացող խնդիրների լուծման գործընթացներին: Մենք ձգտում ենք սովորել և սովորեցնել, անցկացնել վերապատրաստումներ և ստեղծել բոլոր համայնքներում՝ պատրաստված և արագ արձագանքող քաղաքացիների թիմեր, որոնք կարող են գործել արտակարգ իրավիճակներում:

Բացի այդ, կարևորում ենք սոցիոլոգիական ուսումնասիրությունների և հարցումների միջոցով բացահայտել հատկապես դեռահասների և երիտասարդների շրջանում առկա սոցիալական, հոգեբանական և անվտանգության խնդիրները՝ նպատակ ունենալով ձևավորել առավել գիտակից, համախմբված և պատասխանատու հասարակություն:

Մենք պատրաստ ենք մեր ներուժով, փորձով և կամավորական ոգով աջակցել պետությանը՝ վստահ լինելով, որ միասին կարող ենք ստեղծել ավելի անվտանգ միջավայր և բարելավել հասարակական դիմադրողականությունը ցանկացած ոչ կանխատեսելի իրավիճակի դեպքում

Դիմող՝ Ժորա Աբգարյան

« 29 » Նոյեմբեր 2025 թ.